

ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ԴՐԱՄ ԿԱՄ ԹՂԹԱԿՑՈՒԹՐԻՆ
ՈՒՂՂԵԼ ԱՌ
ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՕՐ ԼՐԱԳՐԻ
ԳԱՀԻՐԷ

Direction du journal
NOR-OR
Caire

Ձեռագիրներն եւ չեն դարձաւոր,
ԱՐՏՕՆԱՏԷՐ Ժ. ՄԻՆԻՆԷ

ՆՈՐ ՕՐ

ՇԱԲԱԹ ԱՌԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ ԴՐՏ. ՈՂՋ
Դանիելի համար վեցամսեայ 20
» » երամսեայ 12
Շրջակայից » վեցամսեայ 25

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Վեցամսեայ . . . Ֆրանգ 7

ՌՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ
Վեցամսեայ . . . Ռուբլի 3

ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԵՍԿ
ԵՒ ԹՂԹԱՍԱՐԻ ԾԱՌՔԸ
Խմբագրութեան վրայ է

ԿԻՊՐՈՍԻ ՍՊԱՆԴԱՆՈՅԸ

(Շաբ. Թիւ 97 էն և վերջ)

Արդի դարու դաստիարակութիւնը բարդաւարտ է ինչ որ արտոյց. — Որքան անցնեալ վրայ բարձրագոյն հսկողութեան պէտքը. — Որքան անցնեալ մասին ծրարանայի, Ամերիկայի, Գերմանիոյ օրէնքները. — Որք մը բռնի կրնա՞յ վար դրոյիլ թէ ոչ :

Հայր Սուրբը իբրև օւկան Տեսչութեան, չուրանար Ղևնին ապտակ կերած ըլլալը, ոչ ալ խոհարարին սենեակը պտակելը, մինչև իսկ կը յայտարարէ թէ՛ Ղևնին կրած պատիժները համեմատաբար իր գործած յանցանքներուն խիստ թեթեւ են. ա՛լ հարկ չի կայ վկայութեան: Ինչ իրողութիւն որ հրապարակուած է Ղևնի կողմէն, առանց վկայութեան նոյն ինքն Հայր Սուրբին խոստովանութեանը տակ հաստատութիւն գտած են: Ա՛լ ընթերցողը կրնայ գուշակել թէ այսքան հաճոյքով և պարծանքով խոստովանած իրողութիւններու ետին դեռ ինչչոր չի կան պահուած, որոնց մէկ ամբողջացուցիչ մասը կրնանք համարել Ղևնին կղկղանք թափելու պաշտօնը, ինչ որ Հայր Սուրբը կ'երեւի թէ խնամք տարած է՝ իր խոստովանողներին մէջ զանց աննելու: Բնական է թէ Հայր սուրբը այնքան տխուր չէր կրնար ըլլալ խոստովանելու համար իրողութիւն մը որ վերէն ի վար անբարոյականութիւն կը բուրէ:

Հին ժամանակաց մանկավարժական և դաստիարակութեան դրութեամբ ծեծ, ապտակ, գաւազան, ամէն վայրագ պատիժներ սահմանուած էր աշակերտներուն, բայց այսպիսի պատիժ մը երբեք նախատեսուած չէ: Կղկղանք թափել տալ աշակերտի մը, նամանաւանդ որք մը որ ուրիշ պաշտպան չունի. ասկէ աւելի անբարոյական ու աւերիչ դաստիարակութիւն չեմ կրնար երեւակայել: Հին դարու վարժապետներն անգամ որ տղու մը կը թուութեանը համար ամէն լիազոր իշխանութիւն ունէին, պիտի սոսկային եթէ լսէին այսպիսի զաղեր գործ մը, նամանաւանդ արդի դարու մէջ:

Գալով ծեծի խնդրոյն՝ հին ժամանակաց մէջ այնպէս կը կարծուէր թէ տղայ մը ծեծի տակ միայն կրնան պատրաստել ու մարդ ընել: Արդարեւ այն ատենուան սերունդն ալ ուրիշ էր:

Սոցիալական իմաստուն հրաւեր կը կարգար իր ժամանակի դաստիարակներուն և ծնողներուն ըսելով՝

«Ծեծեցէք, զվեցէք գաւազանով այն տղաք որ չեն ուզեր կըթուիլ, միայն զգուշութիւն ըրէք որ գաւազանի հարուածին տակ չը մեռնին»:

Սպարտացիք իրենց գաւազանները եօթը տարեկանէն սկսեալ կը կըրթէին ու կը մարդէին խարազանի հարուածներով:

Հռոմէացիք դաստիարակները այնքան սաստիկ կը ծեծէին իրենց աշակերտները, մինչև որ քիթներուն բերաններէն սկսէր արիւն հոսել:

Գաւազանը, խարազանը, ֆալգան, ալցակը, հին գարուց վարժապետներու գործերն էին, որոնցմով կը պատրաստէին ու կը կըրթէին հին սերունդի գաւազանը: Ի նշան այդ սովորութեան՝ մինչև իսկ այն ատենի դաստիարակներուն մէջ վարժապետի մը պատկերը կը դրուէր ձեռքը գաւազան մը բռնած:

Միջան դարեր, հին սերունդներուն յաջորդեցին նոր սերունդները, ֆիզիքական ու մտաւորական կազմով բոլորովին տարբեր իրենց նախորդներէն, մանկավարժական դրութիւնը բարեփոխուելու կարօտ էր:

13 երրորդ դարու եւրոպական քաղաքակրթութիւնը՝ նախաձեռնութեամբ լուսավիտ և մարգարէր Ֆրանսայի, արտաքսեց իր դռնէն հին դարերու յատուկ այդ բարբարոս սովորութիւնները, վանեց ծեծը, գաւազանը, խարազանը, ալցակը, որ մանկեքան կըրթէր աւելի զգուշուող ծառայէին: Պարտք դրաւ արդի դաստիարակներուն վրայ՝ անխիղճ չի գանախի աշակերտին ձգտումներուն, գիտնալ վարել անոր ձգտումները:

Մինչ արդի սերունդի կըրթութեան ու դաստիարակութեան եղանակը բարեփոխելու գործը կ'զբաղեցնէ քա-

ղաքակրթիւնը Եւրոպան, մարգարէր մանկավարժներ իրենց հոգածութեան առարկաներ ըրած են Որբանոցներու տրուած խնամքը և գաստիարակութիւնը:

Պ. Թէօֆիլ Ռուսէ, որ Ֆրանսացի ժամանակակից Վիլլալիքոսներու էն նշանաւորն էր, 1882ին ընդհանուր տեսութիւն մը ընելով Ֆրանսայի որբանոցներու վրայ ըսած էր:

«Որբանոցներ կը բացուին ամէն օր մասնաւորներու կողմէն, չեմ գիտեր թէ ինչո՞ւ Ֆրանսական կոտորութիւնը ազատ կը թողու զանոնք, որ ու է հսկողութեան տակ չառնել այդ որբանոցներու վարիչներու արարքը, գործունէութիւնները, հոն որբերուն տրուած դաստիարակութեան եղանակը և ինչ վարիչներուն վրայ այդքան վստահութիւն ընելէն վտանգաւոր բանն է: Կոյր թոյլութեանը յաճախ զեղծումներու գուռ կը բանայ»:

«Աչքովս հաստատած եմ, կ'ընէ, Պ. Ռուսէ, թէ ինչպէս որբանոցներ և աղքատ ու անչափահաս մանուկներ կըրթելու յատկացուած բարեկամական հաստատութիւններ կուրօքէն կը շահագործեն իրենց խնամուցը յանձնուած անմեղ ու անպաշտպան տղաքը»:

Արդարեւ շատ անգամ՝ որբանոց կամ կըրթարան անուան ներքև կը բացուին հաստատութիւններ, ու քիչ յետոյ կը տեսնէք որ ատենք վերածուած են պարզ արուեստանոցի մը, ուր տղաք գործաւորի մը նման կ'աշխատին, որ արուեստական ձեռնարկներ կը պատրաստեն, որ որբանոցի տեսչութեան կողմէ ծախու կը ուրբուին շահով: Այդ տղոցը ծանր աշխատութիւններ ալ կը տրուին, բայց երբեք կղկղանք . . .

Այս հարցը մերթ ընդ մերթ ֆրանսական մամուլը զբաղեցնելէ վերջը, խնդրոյ նիւթ եղաւ վերջերս պաշտօնական շրջանակներու մէջ ալ: Պ. Պիէնվընիւ-Մառլէն ի զիմաց անհատական բարեգործական հաստատութեանց յանձնաժողովին՝ ընդարձակ և աօգիւմանթ տեղեկագիր մը մատուց կառավարութեան: Պ. Մառլէն իր տեղեկագրին մէջ ամէն բանէ առաջ կը պահանջէ որ կառավարութեան նախապէս արտօնութիւն չի

ստացած սրբանոցներ չի բացուին անհասնելու կողմէն: Թէ՛ կառավարութիւնը պէտք է որ՝ մասնաւոր քննիչներու միջոցաւ քննէ ու հսկէ որբանոցներու գործառնութիւնները, որբերուն տրուած դաստիարակութեան և խնամուց եղանակը, ինչպէս նաեւ որբանոցին առողջապահական վիճակը զոր երբեք բարձի թողի ձգելու չէ: Կառավարութիւնը արտօնութիւն տալէ առաջ, պէտք է որ քննութեան բովէն անցունէ որբանոցին կանոնադիրը: Ահա՛ այս է Ֆրանսայի մարգարէր մանկավարժներու առաջարկը յօգուտ որբոց բարձր դաստիարակութեան:

Գալով միւս երկիրներուն՝ Նիւ-Եորքի մէջ որբեր, թափառաշրջիկ տղաքներ պատուաբար որբանոցները՝ 1886 Յունիս 14ին հաստատուած օրէնքի համաձայն անաչառ հսկողութեան կ'ենթարկուին: Նմանապէս Բըրլինի մէջ որբանոց կամ անկեղանոց կարենալ բանալու համար՝ կառավարութեան արտօնութիւն ստանալու է: Եթէ խնդրանք վստահութիւն չի ներշնչէ, կառավարութիւնը կրնայ մերժել զայն: Նոյնը իտալիայ մէջ:

Որբանոցները այս երկիրներուն մէջ բարձրագոյն հսկողութեան տակ աւելուած ըլլալով, զեղծումները հազուադէպ են:

Որբանոց մը իրեն յանձնուած որբը բռնի վար գնելու իրաւունք ո՞ւնի, բանի որ ծնողը եւ կը պահանջէ: Ֆրանսայի որբանոցները երբ որբ մը կ'ընդունի, գրաւոր պայման կը դնեն որբին ծնողացը հետ, որբ մինչև 21 տարեկան ծնողը իրաւունք չը պիտի ունենայ գաւազան պահանջելու: Եթէ հակառակ պարագային ծնողը պնդէ, պարտաւոր է տուգանք վճարել որբանոցին:

Այս պայմանը որբան որ ալ երկուստիք կրնայ յարգուիլ, օրինաց առջև ապօրինաւոր կը նկատուի և չի կրնալ: Նոյն ինքն Պ. Մառլէն իր տեղեկագրին մէջ դիտել տուած է այս կէտը: Արդարեւ պայմաններ կան որ ինքնին անիրականալի և անգործադրելի են, այդ կարգէն է ահա՛ այս պայմանը:

պաշտօնական յայտարարութիւնները այդ թերթին միջոցաւ կը հրատարակէ, թերեւս ի վարձատրութիւն անցեալին մէջ ցոյց տուած եռանդին:

Է՛հ աղէկ. գերագոյն Պատրիարքի մը դէմ նախատինքներուն էն կոշար ուզող մէկը ազատ ու անվրդով կը թողուն, ան բացարձակ լուծութիւն կը պահեն անոր դէմ, մինչդեռ կը հալածեն, կ'ամբաստանեն ուրիշ մը որ իր քննադատական յօդուածովը լոյս սփռել ուզած է ազգային գործերուն վրայ, որ ո է է նախատական խօսք չը պարունակեր իր մէջ, որ ինչպէս ըսի անբաղդատելի կը մնայ միտին հետ:

Մտիկայ ուրիշ բանի չեմ կրնար վերագրել բայց եթէ ազգային վերջիններու տղի-տուժեանը միս կապած ու թանձրացած: Ա՛լ ընթերցողը կրնայ ըմբռնել թէ Աստուծոյ այդ տանը մէջ երկու կշիռ և երկու չափ կան պահուած, հոն ուր արգարութեան կշիռը մէկ պէտք էր ըլլալ ամենուն համար:

Ինչ այնպէս կը թուի թէ Մամբրէլ բահա-նան է. Պարսկ Պատրիարքին ալ աւելի կարեւորութիւն ունի հոտ տեղ. ա՛լ աւելի սիրելի ու յարգելի է Ազգային վարչութեան աչքին առջև, որ իր դէմ դրուած քննադատական յօդուածի մը առթիւ ամէն ծայրայեղ միջոցներու կը դիմեն, ու նախատինք-ներուն էն ծանր ու վատթարագոյն ան ալ գերագոյն Պատրիարքի մը դէմ, հրատարակող և սպազորդ մէկը անպատիւ կը թողուն:

Աղէկ, ահա գործեր ուր աչքի կը ցայտեն անարդարութիւն ու միատեղականութիւն, որոնց միակ գործիչը ու պատասխանատուն է Առաջնորդարանը. այսպիսի կեցոտու վարչութեամբ վարակեալ Առաջնորդարանի մը գործերը քննադատել սչ միայն արժանի է ու գովելի, այլ նաև պարտականութիւն մ'է:

Եւսակցեմք իմ մասին, սխալ է թէ զբը-դրուած եմ ժողովուրդին միտքերը Առաջնորդարանին դէմ. իմ մասին այսպիսի ամբաստանութիւն մը՝ անարգար և անխորհուրդ է: Անցած վարձածը ժողովուրդին տեղեկագրուի, անոր սովորեցնել իրաւանց և պարտուց ճանաչութիւնը, կարծեմ՝ ամբարիշտ գործ մը չէ: Եթէ կայ ամբարիշտ գործ մը, ան ալ տեղի տալ որ կրկին բուռի:

Ընդունեցէք, Սիրելի Փափագեան, իմ բարեկամական անկեղծ բարեններս:

Խ. ՋՈՐՄԱՊ

ԱՐԵՂԱՆ

(ՊԱՏԵՐ)

Անգործութեամբ սարսափող տաճարին մէջ իրկուծը կ'իյնայ զողջո՛ ստուերներով:

Հոն, խորանը ծրարուած է կիսաթափանցիկ մթնոլորտ մէջ, ուր մոմի մ'առկայ լոյսը կը զողջոյն, խորհրդաւորելով խորանի կեանագիրը, ուր դրուած են կերտններու, աշատանկներու միջև սրբազան մատ-եաններ, սրբատուփեր, սրբազան անօթներ, ու խորհրդաւոր պատկերներ. ու այդ ամենը կը լրացնէ վերէն՝ ճարմանդներէ կախուած մեծ վարագոյրը տաճարին, որ հանդիմանած է ծոպաւոր ժապաւենով մը սիւնի կողքին:

Յետոյ, վարը գասին մէջ, անթափանցելի սեւութիւն մը, ահագին ստուերի զանգը-ուածք մինէ, որ կը տիրէ:

Ու անպի՛ն՝ ճերմակ, պաղած սիւները հագին կ'ընդհանրութիւն. անոնց գծագրութիւնը կը զողջոյն մթնոլորտի մէջ:

Ու աւելի վար՝ գալի՛թը՝ ուր բակէն՝ դեղ-նած, հիւանդ լոյս մը կը ստուերտուի գան-գա՛ց, տարտա՛մ:

Անշուկ միտպաղաղութիւն մը ամբողջ տաճարի կազմին մէջ. գմբէթներու խոր-թիւններ վերը, արիւկ կախուած են ջահեր գարձեալ. ու խոնկը՝ որ բարձրուել կը բըզ-խայ բուռայ բուռայ, կ'անօտարանայ, կ'ան-գայտի գմբէթաբլմներու անորոշութեան մէջ մարիլով:

Լուս աղօթողներ բանուած շունչերով շարուեր են կարգ կարգ, ու կը ծնրադրեն. շունչեր՝ որ կը հասնին կարծես, դեմքեր՝ որ տեսիլքներու մէջ յափշտակուած ըլլան կարծես. ու մերթ կըզգաս թէ անծանօթէն ցուրտ շնիկ մը կը բղի, ու այդ ահաւոր հանդարտութեան մէջէն սահմանեցող սար-սուս մը կը ռահեցնէ հոգիի՛ց մէջ:

Եւ մէկէն, անշուկ, ստուերաւորելու մար-դիկ կը ցցուին ստուերներուն մէջէն, ծըն-րապիւր սեղանաւոր աղօթաւորները գասին, որ պահ մ'առաջ՝ հսկումի հոգեխոհանքնե-րուն մէջ էին մտնուած, մոլորո՛ւն, մտասո՛ղջ:

Ու կը բարձրանայ շարական մը, մեղմ, գան-դալ նախ, որ յետոյ յարածին գնացող կը մեղեատանայ, կը բարձրանայ, կ'սնի ու հե-տըզհետէ իր բամբ շեշտերուն մէջէն երկի-ղի զգացում մը կը փռէ վրայ անծանելի:

Անիկուն մը՝ մթնօլորտի մէջ կանգնած, իր սե հանդերձանքին մէջ կծկուած, երիտա-սարկ Սեբեղայ մընէ. միլամանդձիկ եղանակ-ներէն յուզումաւից:

Կաթիլ կաթիլ ծնող մեղամաղձնութիւն մը կը հոսի իր երակներուն մէջ, իր սրբ-տին խորը. ու հոն կը ստեղծագործէ հո-գեկան անյոյս դրութիւն մը, տխուր բանե-րով աղի, շարժող:

Շունկի կ'ընկնի կամացուկ մը, ճակա-տը իր երկու ձեռքերուն մէջ կ'առնէ ու կը թժղու որ իր սե մտածումներուն օղակը բակ-տի, բըբրուի արտադրին ծանր նուազին մէջ, որ իր Լուսինը կը հայեցնէ:

* *

Երբ աւարտեցաւ աղօթքը, ամեն ինչ, երբ ստուերները կարգով գուրս սահեցան տաճարէն, ան դեռ հոն էր, երիտասարդ Սե-բեղան, իր հրակէլ ճակատը ձեռքերուն մէջ, ինքնամիտփ, ինքնասոյլ:

Հիմա՛, ամայի տաճարին մէջ, տեսարա-նը վախ կազդել վրայ. երիտասարդ Արե-ղան էր գարձեալ, միևնույնի, ծայրուած, կծկուած, անշարժ սե մտմիտայի մը պէս:

Ու ելաւ կամացուկ մը. սարսուս մըզգաց գինըր տեսնելով միս միտակ. հանց իր գրպանէն սե թաշկինաթը, ու անոր մէջ փըլձ-կեցաւ օրտարուի . . .

Ինքնամիտացութեան ու մտալլկման մը մէջ էր նա . . .

Յետոյ, յամբ, գուրս ելաւ տաճարէն, ու բակին մէկ անկիւնը, իր խոցին մէջ մը-տաւ: Վառեց իր մոմը, ու անոր տկար լոյ-սին տակ աչքէ անցուց օրուան լրագիրնե-րը, ու գարձեալ սե շքանակով նամակներ . . .

* *

Արիւնով ներկուած թուղթեր էին նորէն անոնք, մտերմի ու սիրելիներու արեան շի-թերով բծաւորուած, որոնց հիմա կ'ուզէր իր արիւնն ալ խառնել . . .

Հայրենիքէն ջարդարէն պատմութիւններ կային հոն. հազարաւոր կեանքերու փճա-ցում, արիւն ու աւերակ ամեն տեղ. կոյտե-րը՝ լլկուած, կտրիճներ՝ ինկած, ժողովուր-դը՝ մեխիկներուն ու աւերակներուն վրայ նստած. ուով, ու սրածութիւն, հրդեհ ու ա-ւար. կ'ընէր վայրագօրէն լլկուած, մայրե-րու շօր ստիքէն կախուած մանուկներ՝ սո-վամահ, խարոյկ, շղթայ, բանտ ու կախաղան:

Վայրագ կոտորածի այս արեւածաթաւ պատկերը վրդովեց վերստին իր աշխարհէ բաշտուած ազգասէրէ վիրատուր հոգին. ցաւ-

ցուց խորձ կ շարժելով, ու ասիւնտղ սիր-ար. ցնցեց իր աշխարհէ հեռու. բաշտաղի, ու աղօթաւորներու կեանքին նախնուած մրա-քի խորանը, որ կեղծանկարն ընդունարան մը գարձած էր հանդարտութեան, բարու-թեան, տիեզերական ցաւերու, որոնց անձ-նատուր՝ մոռցեր էր հայրենիք ու մարդ-կութիւն:

Ու հիմա հակասական կոիւ մը կ'արթնե-նար իր մէջ, ու դժբաղ կզգար ինքզինք դան մոռածանց հայրցին մէջ:

* *

Տխուր ու մերկ պատեն կախուած սե շք-ջանակով հայելիին մէջ նետուեցան յան-կարծ իր հայեացքները. հոն դեռեց իր կը-րօնաւորի դեմքը, սե սքեմը, ու ինքզինքը իր անձնատրութեան մէջ գատու ասարթինակօ-րէն պղտիցած, ապիկարած, մեռած, ան-կարող, դիակ . . .

Դժբաղ կզգար ինքզինք այլևս, քանի որ իր եղբայրները կը կոտորուէին. անգոր կըզ-գար նոյն իսկ իր մարդու աղօթքը, քանի որ արիւնը կը հոսէր անվերջ. հիմա, իր գիրը՝ աւելի վարձական ու խարոյկի գեր կը թուէր իրեն, ու աւելի քան երբէք իր կոչ-ման նուատութիւնը կը շեշտուէր իր աչքին, իր բոլոր տխուր մերկութեամբ:

Ինչ պիտի ընէր իր սրտի բոլոր այս դժբաղք արձագանքներուն հանդէպ. աղօթքի յիմար մպտուք մը, անյուսուածամբ սիրտը սոսկանող «աէր, ռոգրմեալներ, ցա-ւատանջ ու անօգուտ աղօթքի ու մարտի-քութեան մատնուած համակերպութիւն մը, անգոր էին այդ արիւնները կասեցնելէ, ա-նօթի ու անուուաղ կոտորուող իր եղբայր ու բոլորը փրկելէ:

Ինքնամանաչութեան, ամօթի շիկունքներ այրեցին իր այտերը, իր երիտասարդ կուրծ-քին ներքե լճացած խաղաղութիւնը ունաց, ալեծիփեցաւ, ու զգաց թէ քաղաքակրթութիւնը աղօթքով չէ որ կը բալէ. աշխարհի արիւ-նով գոնուած բանը խաղաղասիրութեան տը-կար վրձինով չաւեղծուիր, ու իր երազած մտատկար կեանքը տիեզերական հանդիս-տին համապատասխանող փրկարար իտէալը չէ կարող դանալ, բո՛ւ: Իր երիտասարդ կուրծքին տակ զգաց, թէ ամեն մեկուն գերն է՝ նպաստել հայրենիքի համայնական շար-ժումին:

Փայլակի պէս արագ մտածումներ յան-կարծ սահեցան տողանցեցան իր գանկին տակ. Արեղան չհասցեալ իր մէջ կատար-ուող այս հակասական կոտի հոգեբանու-թիւնը, բայց այդ վարկեանէն սխալատեց իր անցեալը . . .

Ու ամբողջ խորհուրդ մը կը կատարուէր անոր էութեանը մէջ. ու այլևս փրկու՛ած էր նա . . .

* *

Հիմա իր երիտասարդ կուրծքին ներքե, իր կոչման դէմ ընդվրամի հով մը կ'ոտնար, ու գանկին տակ փոթորիկներ կը սուսանէ-ին. կրակը զգաց իր մէջ, սրբազան կը-րակ, որ կեանքը իբր հալող խոնկ կը տրամադրէ յոյսարկամ հայրենիք կոչուող սեղանին վրայ սպանուելու:

Որոշեց գուրս նետուել վանական այդ սե ու մալլ պատերէն, ուր իր ծաղիկ երի-տասարդութիւնը կըսպանէր անվերջ ա-ղօթքներու արամալրած կեանքով, ու ապիւլ-երատասարկ բոլոր պարտաճանաչութեան ձե-ւերուն տակ:

Իր հոգիի խորէն այն ատեն, գանգա՛ղ բարձրացաւ հին երգ մը, զոր երբեմն լը-սեր էր արտաքին աշխարհին մէջ. Իտալա-ցի բանաստեղծուհոյն կրքն էր այն. «Ամենայն տեղ մահը մի՛ է» . . .

ցնցուցաւ. սենեկի թանձր որմէն կախուած խաչելութեան պատկերին տխուր ակնարկ մը նետեց, ու աղօթեց. վերջին անգամն էր որ կ'աղօթէր նա. ու անոր աղօթքն էր.

«Մարդկային սիրոյն համար, խաչեցե՛ալ, «Մենք վ'ըր, ու մեր շարժը, ամեն ինչ սէր կը բարոյեն. սէր շարժարուողին, սէր գրկուածին, սէրը ընկերին:

«Սիրոյ ու աշխատութեան մէջն է կեանքը կայուն: Ու ես այստեղ կը մահանամ. . . « . . . Անպի՛ն մեռող հազար շրթունքներ իրար կը փնտսին տարփանտնչիկ վերար համբուրեր:

«Հազար կեանքեր հայրենիքին մէջ կը խո-յանան արի, բարբոթուն հնացին մէջ մեռնելու: «Եւ մե՛նք, մենք սատ ոչնչի՛ կը ծառա-յենք . . . Գթութիւն:

«Ո՛վ մեկ նետած է այս խորթ երկրին վրայ. այս պարապ պատերուն ետիկը:

«Ո՛վ մեռուցած ու մերժած է մեր սրտի երազանքը . . .

Ո՛վ այսպէս կը ճնշէ մեր վրայ, կը ճըմ-լէ մեր հոգին, ու կը ճգմէ մեր գոյութիւնը: «Որպիսի՛ ատելութեամբ բեռնաւորած է մեկ փու մարդը կրօնքը գէպի մեր հա-լածեալ եղբայրը . . . Ա՛խ . . .

«Ո՛ր ձեռքը անձանօթ մեզ թողած ու հը-րած է գէպի այս խուլ պատերուն ետիկը. ուր սէրը՝ մարդկութեան ու հայրենիքի՛ կը մեռնի . . .

«Ինչո՞ւ կոյր ճակատագիրը կ'աղաղակէ մեզի. «անօգուտ է ամեն ինչ» . . .

«Ա՛հ, գթութիւն. մենք անտո՞ք ենք, որ պարտուեցան» . . .

* *

Վանքի մոթ որմերու մէջէն յանկարծ խուսափուկ ստուեր մը կը սահէր դիշեր ժամիկ:

Արեղան էր ան, որ կ'երթար իր Հայրե-նի աշխարհին արիւնազանց հոգեբէն իր եղ-բոր արեան բողբոջ ձայնիւր լսելու . . .

Ու, ալ փրկուած էր . . .

Ա.Ս

ՄԵՆ ԴԺՒԱՍՏՆԵՐԸ

«Նոր-Օր»ի ներթրուած պէսպէսութիւն մը և երբեմն դժուարամարտելի պարտու-կութեանը համեմ մը տուլու փափաքով՝ անգամ մ'ես կը փորձուիմք հարցնել մեր բոլոր գրասէր բարեկամներուն. սորո՞ք են աշխարհի մեծ դժբախտները:

Բայց, պատասխանել առաջ, գամազա-նել զիտեմք, ինչպէս պէտք է գամազա-նել զիտեմք շարունակ ծեռք երկմըը-նելու վարժ սովորական տեմակ մուրաց-կամը՝ պատուաւոր ու խալմոտ ըմտաբէն, ամէն մարդու գթաւատ կարեկցութեանը իսկապէս արժանի:

Պատասխանները պիտի հրատարակուին առհասարակ. բաւակամ է որ կարճ ըլլան, մոլորութիւն մը պարտեմակեն, ու քիչ մ'ալ սրամտօրէն գրուած:

Ս.Ս

ԳՈՐԶ ՈՒԶՈՂՆԵՐ

Մ'իւր անգործ ազգայիններու գա-սակարգին օգտակար ըլլալու նպատա-կաւ, այսուհետեւ «Նոր-Օր»ի շարժուող-երեսի մէկ անկիւնը ճիւղալու պիտի սպաննէ, «Կործ Ուղղունը» վերնադրին տակ, յայտարարութիւնները ամեն ա-նոնց՝ սորոնք մատնաւոր վճարում մ'ը-նելու անկարողութիւններն կապալու-ցանեն:

